

ՓԵՏՐՎԱՐ 2021

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի տեղադրում և փոխարինում	7
1.3. Ջրահեռացման համակարգ	8
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	10
1.5. Էներգահամակարգ	10
1.6. Մեքենա-մեխանիզմներ	11
2. Առևտրային տնօրինություններ	12
2.1. Բաժանորդների տվյալներ	13
2.2. Հասույթ	13
2.3. Գանձում	14
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	15
2.5. Ջրաչափեր	16
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	17
3. Տեխնիկական տնօրինություն	18
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	19
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	20
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	23
3.4. Ջրատար համակարգի բարելավում	24
3.5. Գոտիավորման աշխատանքներ	25
3.6. Քլորի և խլեղու ջրի մաքրման կայանների ծառայություն	27
3.7 1-85 թեժ գիծ	28
4. Լրատվական ծառայություն	29
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	32
5.1. Փաստաթղթերի մշակում	33
5.2. COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ	33
5.3. Դասընթացներ/սեմինարներ	33
5.4 Ռիսկերի հայտնաբերում/Մեղմացնող միջոցառումների կիրառում	34
6. Համակազմային ցանց և սերվերային համակարգ	35
6.1. Համակարգային ցանց	36
6.2. Ինտերակտիվ համակարգ	37

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ


Քաղաք Երևան

● Կենտրոն վարչական շրջան



«Հարավ» ՇՏ «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից Գլինկայի փողոց 2 հասցեում խցափակվել է կառույցների տակով անցնող $d=100$ մմ քայքայված անօգտագործելի ջրագիծը: Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է $d=100$ մմ $L=120$ զձ/մ երկարությամբ պողպատե խողովակը և խնայվել է մոտ $Q=4$ /վրկ ջրաքանակ:

● Էրեբունի վարչական շրջան

«Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից Գուրգեն Մահարի 129/14 հասցեում $d=150$ մմ պողպատե քայքայված ջրագիծը, որը անցնում էր ջեռուցման կամակարգի առվակի և դիտահորերի միջով, փոխարինվել է $d=63$ մմ $L=40$ զձ/մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով: Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է $d=150$ մմ $L=40$ զձ/մ երկարությամբ պողպատե քայքայված խողովակը, գաղտնի վթարի հայտնաբերման և վերացման արդյունքում խնայվել է մոտ $Q=3$ /վրկ ջրաքանակ:



● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից Վարդաշեն 6 փողոց 39 հասցեում $d=125$ մմ պողպատե քայքայված ջրագիծը փոխարինվել է $d=110$ մմ $L=60$ զձ/մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով: Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է $d=125$ մմ $L=60$ զձ/մ երկարությամբ պողպատե քայքայված խողովակը և խնայվել է մոտ $Q=3$ /վրկ ջրաքանակ: Թվով 3 ջրաչափական հանգույց տեղափոխվել և տեղադրվել է տարածքից դուրս դիտահորերի մեջ:



● **Շենգավիթ վարչական շրջան**

«Հարավ» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Չեխովի փողոց 48 հասցեի սեփական տնատիրությունների և Արարատյան բարաքներ թաղամասի տների տակով անցնող $D=800$ մմ պողպատե ջրատարը գտնվում էր քայքայված վիճակում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ջրատարը ապահովում էր փոքրաթիվ բնակիչ-բաժանորդների ջրամատակարարումը, տեղամասի աշխատակիցների կողմից $d=800$ մմ ջրատարը խցափակվել է: Արարատյան բարաքներ թաղամասի բնակիչ-բաժանորդների ջրամատակարարումը ապահովելու համար կառուցվել է $d=90$ մմ $L=120$ զձ/մ պոլիէթիլենային նոր ջրագիծ և թվով 10 ջրաչափական հանգույցներ տեղափոխվել են տարածքից դուրս տեղադրված ջրաչափական դիտահորերում:

Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է $D=800$ մմ $L=470$ զձ/մ երկարությամբ պողպատե քայքայված ջրագիծը, ինչպիսիք է մոտ $Q=17$ լ/վրկ ջրաքանակ:



● **Մարզ Գեղարքունիք**

«Ճամբարակ» շահագործման տեղամասի սպասարկման տարածքում գտնվող «Ճամբարակ տեղամասի ՕԿՁ»-ից ինքնահոս եղանակով սնող $d=80$ մմ պողպատե ջրատարի $L=70$ զձ/մ երկարությամբ հատվածը գտնվում էր վթարային վիճակում: Հաճախակի կրկնվող վթարների հետևանքով առկա ջրի արտահոսքի պատճառով ջրամբարում հնարավոր չէր կայուն պահել ջրի մակարդակը:

«Ճամբարակ» տեղամասի աշխատակիցների կողմից $d=80$ մմ քայքայված պողպատե ջրագիծը փոխարինվել է $d=63$ մմ $L=70$ զձ/մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով, ինչի արդյունքում կարգավորվել է ջրի մակարդակը ջրամբարում, ինչպես նաև բնակիչ-բաժանորդների ջրամատակարարումը:

Փետրվար ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	2,939
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	24,370
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	24,410
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	10,690
Ջրաչափական հանգույններ ուսուճասափրություն, սխեմաների կազմում	հատ	33
Շահագործումից հանված ջրագիծ	մ	1491.5
Կառուցված ջրագիծ	մ	1782.6
Կառուցված կոյուղագիծ	մ	263.5
Վերացված գաղտնի վթարներ	հատ	44
Փոխարինված փական	հատ	20
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	708
Մաքրված դիտահոր	հատ	553
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	92.2
Վերացված վթարներ		
Ջրամատակարարման ցանցում	հատ	1223
Ջրահեռացման ցանցում	հատ	2379
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	284

Փետրվար ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	473	1032	408

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է փետրվար ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	266	8	3	1	3	3	1	0	0	285
Փոխարինված	682	37	6	3	4	3	0	0	0	735
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	104	15	4	4	2	2	0	0	0	131
Ընդամենը	1052	60	13	8	9	8	1	0	0	1151

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 1151 ջրաչափ: Կատարված աշխատանքների 109 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ


Փետրվար ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում զժ/մ
1	Արաբկիր	1710	261	0
2	Մաշտոց	2120	253	24
3	Շահումյան	3796	226	0
4	Զեյթուն	610	269	0
5	Շիրակ	1000	438	0
6	Արթիկ	0	55	0
7	Ապարան	0	30	0
8	Ալավերդի	1440	11	42
9	Աշոցք	0	4	0
10	Բերդ	150	12	2
11	Իջևան	1210	51	0
12	Լոռի	2340	268	30
13	Նոյեմբերյան	0	16	0
14	Սպիտակ	0	14	0
15	Ստեփանավան	0	11	0
16	Թալին	0	26	17
17	Տաշիր	380	11	0
18	Էջմիածին	0	171	0
19	Չարենցավան	570	68	0
20	Աբովյան	3030	90	30
21	Հրազդան	450	121	0
22	Աշտարակ	1920	11	6
23	Կենտրոն	210	246	6
24	Հյուսիս	530	304	0
25	Հարավ	80	376	0
26	Էրեբունի	250	200	0
27	Արմավիր	0	132	0
28	Արտաշատ	0	114	0
29	Էջմիածին	0	147	0
30	Արարատ	0	85	22,5
31	Մասիս	0	52	0
32	Գավառ	345	20	0
33	Սևան	0	89	11
34	Մարտունի	0	23	0
35	Վարդենիս	0	7	0
36	Ճամբարակ	0	14	0
37	Դիլիջան	0	36	12
38	Վայք	0	15	0
39	Եղեգնաձոր	0	6	0
40	Ջերմուկ	0	20	0
41	Սիսիան	370	59	0
42	Գորիս	0	35	0
43	Կապան	0	71	0
44	Մեղրի	60	19	40
	Ընդամենը	22571	4487	220

Մարզ Արարատ

● «Հարավ» ՇՏ «Արտաշատ» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող ք. Վեդի, Արարատյան 43 փողոցում գտնվող $d=270$ մմ կերամիկական կոյուղագիծը, ամբողջությամբ քայքայվել էր, առաջացած նստվածքների պատճառով տեղ-տեղ կոտրվել էր: Հաճախակի կրկնվող վթարները ստեղծում էին հակասանիտարական վիճակը, ինչը առաջացնում էր բնակիչների դժգոհությունը: «Արտաշատ» տեղամասի աշխատակիցների կողմից $d=270$ մմ կերամիկական կոյուղագծի $L=22,5$ գծ/մ երկարությամբ հատվածը փոխարինվել է $d=200$ մմ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակերով և արդյունքում կոյուղագիծը գործում է անխափան:



Մարզ Սյունիք



● «Հարավ» ՇՏ «Մեղրի» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող ք. Ագարակ, Սայաթ Նովա 1 հասցեում շարունակվում են կոյուղագծի փոխարինման աշխատանքները: «Մեղրի» տեղամասի աշխատակիցների կողմից ընթացիկ ամսում մոտ 2 մետր խորության վրա կառուցվել է ևս $L=40$ գծ/մ երկարությամբ նոր $d=200$ մմ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով կոյուղագիծ, տեղադրվել է թվով 1 դիտահոր:

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել է հետևյալ աշխատանքները

- Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանում օդամղիչի օդի ֆիլտրը խցանվել էր, իսկ ռոտորի ածխե թիակները մաշվել էին, որի շնորհիվ բավարար քանակի օդ չէր մղվում: Արդյունքում վերը նշվածները փոխարինվեցին և այժմ օդամուղը աշխատում է բնականոն ընթացքով: Կատարվել է նաև քերիչ սանրերի կարգաբերում և ռեդուկտորների զննում:

- Վարդենիսի կեղտաջրերի պոմպակայանում այրվել էր պոմպերից մեկի էլեկտրակիչը, որն էլ փոխարինվեց նորով և այժմ պոմպը աշխատում է բնականոն ընթացքով:

- Ջերմուկի կեղտաջրերի մաքրման կայանում շարքից դուրս էր եկել ավտոտնակի էլեկտրական շերտավոր դարպասը: Թերությունը ժամանակավորապես վերացվել է մինչ անհրաժեշտ պահեստամասերի ձեռք բերելը: Կատարվել է նաև բոլոր սարքավորումների զննում և կարգաբերում:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը լ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը լ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	77,073	27
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	81,480	21.6
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	157,510	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	123,906	21.6
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	115,539	9.9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	17,480	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	12,268	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	15,100	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	2,7400	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Քանակ
Պոմպի աշխատանքի զննում և կարգավորում	82
Էլեկտրական սարքերի զննում և կարգավորում	17
Այցեր	11
Պոմպի վերանորոգում	5
Պոմպի տեղադրում	1
Էլեկտրական փականի հոսանքի միացում	1

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Փետրվար ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար փետրվար ամսվա ընթացքում նորոգվել են թվով 2 մեքենաների շարժիչները՝ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 9 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճուպանները:



Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 6 մեքենա-մեխանիզմների վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսատնիններ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 27 անվաղողեր նորոգվել են, փոխարինվել և հավասարակշռվել են:

Թվով 6 մեքենայի մարտկոցները փոխարինվել են նորերով:

Փոխարինվել են թվով 102 մեքենա-մեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, քսայուղեր և անտիֆրիզ:

Թվով 5 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 9 մեքենա-մեխանիզմների համար նորոգվել է և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ: Վերանորոգվել են թվով 8 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուր լարեր, ռելեններ, վառոցքի բանալիներ:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 5 մեքենա-մեխանիզմների վրա:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 6 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 4 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Թվով 5 մեքենաների վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Թվով 8 մեքենաների վրա իրականացվել են գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիոդային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Նորոգվել է թվով 3 մեքենաների փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.03.2021թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 529,306 պայմանագիր: Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում:

Տնօրինություն	Սպառողներ	2021թ. փետրվար ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	653,771	507,027	77,6
	Իրավաբանական անձ	29,053	22,279	76,7

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում:

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	724,741	568,415	78,4
	Իրավաբանական անձ	34,489	23,670	68,6

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): Արդյուքնում տեղամասերում 2021թ. փետրվար ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվը, (այցելությունների թիվը), չնայած Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 32,556 բաժանորդով (կամ մոտ 5,8%): Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել է տվյալների բազա է մուտքագրվել թվով 605 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) զուգահեռ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Փետրվար ամսվա ընթացքում ստուգաչափվել է 3953 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 03.2021
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	1521	1897	286	3704
	Իրավաբանական անձ	64	173	12	249
	Ընդամենը	1585	2070	298	3953

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ փետրվար ամսին փոխարինված 3953 ջրաչափերի մոտ 60%-ը (կամ 2368 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 159,537 մ3 հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2021թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Փետրվար ամսին գանձումը կազմել է 1,660 մլն դրամ (91 %):

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարուժները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում մինչև 2020թ. մարտ ամիսը, կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Մակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ

թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ինչպես նաև ռազմական դրությունը, ընկերությունը փետրվար ամսին զերծ է փացել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրառվող մեթոդներից (բացառությամբ SMS-հաղորդագրությունների):

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Փետրվար ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 53 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 6,3 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2020թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
10383	1371209062	6726	680274903	149	20247521	3454	597564917	3764	325021494

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 64,78 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 1,37 %-ը մերժված:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.03.2021թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում փետրվար ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	7,545	1,717
Բնակիչ-բաժանորդներ	5,652	1,163
Իրավաբանական անձեր	1,893	554

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՏՏ սպասարկման տարածքում շուրջ 242.9 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

2021 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ



2.5 ՋՐԱԶԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.03.2021թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	690,091	566,663	82.11	33,358	23,661	70.93
	Առանց ջրաչափի	34,650	1,752	5.06	1,131	9	0.80

Տվյալների բազայում 01.03.2021թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	862,054	381,279	44.23	37,294	9,982	26.77

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 5957 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 1114 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱՄ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2327	1899	81.6
գ.Պոռշյան	1563	1035	66.1
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5863	1816	32.0

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, ջրաչափերի փոխարինման որոշակի աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 8,267, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 6,871, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 1056, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1,574, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 979, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 1256 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3175 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում: Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից: Հայտնաբերված և արձանագրված խախտումների քանակի նվազումը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ պայմանավորված է նաև երկրում տիրող, վերը նշված իրավիճակների հետ:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	308	118,680	20,023,604

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի փետրվար ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 96.2%, ինչը 0.4%-ով ցածր է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:


Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն




● Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 49 ՃԿՓ-ներ:

Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների ցանկը և դրանց գրաֆիկներից մի քանիսը.




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2021թ-ի փետրվար ամսին, 2020թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 112 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 117 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկներում.



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 21 384 ԿՎտ.ժ. (4,32%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր ԱՌԱՆՅ ԽԱՐԲԵՐԴԻ ՊՈՍՊԱԿԱՅԱՆԻ*



Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է 250 հասցե, որի արդյունքում թվով 4 հասցեներում հայտնաբերվել են հավելագրումներ՝ 40523 կՎտ.ժ, մեկ հասցեում հայտնաբերվել է հաշվիչի միջամտություն՝ 20000 կՎտ.ժ, մեկ հասցեում փակված սպառիչի վրա գրանցվել է ծախս՝ 1339 կՎտ.ժ, որոնք ճշգրտվել են «ՀԷՑ» ՓԲԸ-ի հետ:


Լճաշեն խ/հ-ում հաշվետու ամսվա սկզբին «ՀԷՑ» ՓԲԸ ներկայացուցչի հետ կազմվել է առևտրային էլ. հաշվիչի փաստացի ցուցմունքների մասին արձանագրություն, որի արդյունքում բացառվել է հավելագրման հնարավորությունը և վերականգնվել է նախկինում հավելագրված 12360 կՎտ.ժ ծախսը:

Մեծամոր պ/կ-ում հայտնաբերված 53000 կՎտ.ժ հավելագրումից հաշվետու ամսում վերականգնվել է 26000 կՎտ.ժ-ը: Մնացածը կվերականգնվի հաջորդ ամիս:

Արցախի 22 (իրացում) հասցեի փակված ապառիչի գրանցած 1339 կՎտ.ժ ծախսի դուրսգրման նպատակով՝ 10.02.2021թ. Մ/Շ-2517 գրությանը դիմել ենք «ՀԷՑ» ՓԲԸ-ին: Հաշվետու ամսում վերոնշյալ ծախսը դուրս է գրվել Արցախի 20/1 հասցեի ծախսից:


● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 649,87 ԳՎտ.ժ կամ 2.9%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Էջմիածին



● Շիրակ քաղաքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 319 ԳՎտ/ժ կամ 0,9 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ



Կատարված աշխատանքներ

Թվով 37 խոշոր պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 16 պոմպակայաններում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Թվով 435 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 163 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Ինվերտորների տեղադրու


Յոթ հասցեներում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փոխարինվել են ինվերտորային համակարգով:

Խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի խափանումներ

Հաշվետու ժամանակահատվածում 14 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:


● Փետրվար ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 105,073 ԳՎտ.ժամ կամ 12,37% (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է 134,276 ԳՎտ.ժ/ամիս կամ 7,11 %` անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն նվազել է 842,64 ԳՎտ.ժ կամ 2,19 %` անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

«Վեոյիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են փետրվար ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Շահագործումից հանված ջրագիծ	մետր	975.5
Կառուցված ջրագիծ	մետր	2212.3.8
Կառուցված կոյուղագիծ	մետր	381
Շահագործումից հանված կոյուղագիծ	մետր	381
Կոտայքի և Տավուշի մարզերի գյուղերի կոյուղագծերի թվայնացում	մետր	1223055,6
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	187
Հյուսիս տեղամասի ջրագծերի մասին տեղեկատվության ուղղում	տեղամաս	1
Շահումյան և Դավիթաշեն համայնքների ջրագծերի և ջրատարի թարմացում	համայնք	2
Էքսկավատորների տեղադիրքերի տեղեկատվական բազայի ստեղծում ԱՏՀ-ում	բազա	1
Ավան համայնքի ջրագծերի թարմացում՝ ըստ նոր տեղեկատվության	համայնք	1
Ավան թաղամասի ջրագծերի թարմացում՝ ըստ «Հյուսիս» տեղամասի տեղեկատվության	համայնք	1
Նորք Մարաշի ջրագծերի թարմացում՝ ըստ ԱՏՀ օպերատորի տեղեկատվության	թաղամաս	1
Ջրագծերի թարմացում տեխնիկական պայմանի հիման վրա	Տեխ.պայման	1
Ստեփանավան քաղաքի քարտեզի պատրաստում	քաղաք	1
Ավան համայնքում Ջրառի տարածքի տվյալների տեղափոխում Google Earth	ջրառ	1
Ղազարավանի «Վեռլիա Ջուր» ընկերության կոմունալ ենթակառուցվածքի, կադաստրային տվյալների տեղափոխում Google Earth	ենթակառուցվածք	1
Մեծամորի և Բաղրամյանի ջրագծերի թվայնացում AutoCad-ի տվյալներով	քաղաք	2
Երևանի շենքերի և փողոցների թարմացում և ուղղումներ ԱՏՀ-ում	քաղաք	1
Նոր Նորքի ցայտաղբյուրների տեղեկատվության թվայնացում գոտիավորման տվյալների հիման վրա	համայնք	1
Դավիթաշենի հոսքաչափերի տեղեկատվության լրացումներ, բազայի թարմացում ԱՏՀ-ում	համայնք	1
Պլանային ջրանջատումներ	հատ	5
Վթարային ջրանջատում	հատ	1
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական բաժանորդների տեղադիրքերի ճշտում	բաժանորդ	1157
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական բաժանորդների տեղադիրքերի ճշտում	բաժանորդ	45
Ֆիզիկական նոր կետերի ավելացում բազայում	կետեր	629
Իրավաբանական նոր կետերի ավելացում բազայում	կետեր	29
Տվյալների հավաքագրում ԱՏՀ-ում 17 համայնքներում ամբողջական հիդրավիկ մոդելների կառուցման համար	համայնք	17
Մեծամորի EPS հիդրավիկ մոդելի ստեղծում՝ ըստ գիշեր-ցերեկ տեղադրված հոսքաչափի և լոգերի:	հատ	1
Հյուսիս տեղամասում DMA զոնաների ստեղծում	մասիփներ	9
Պոմպակայանների ակտիվների դաշտային գնահատում	պոմպակայաններ	13
Պոմպակայանների վիճակի և ռիսկի գնահատում և մուտքագրում տվյալների բազա	պոմպակայաններ	10
Ներքին ջրային ցանցի տվյալների մուտքագրում բազա	գյուղեր և քաղաքներ	6
Գանձաքար, Գետահովիտ, Լուսաձոր գյուղերի աշխատանքային քարտեզների տպում «Google map»-ում	գյուղեր	3
Արագածոտն մարզի ջրատարների տվյալների թարմացում և տվյալների փոխանցում ԱՏՀ	համակարգ	2
Դիլիջան քաղաքի թարմացում և բազայի լրացում	քաղաք	1

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը.

Արզնի 1

«Լամպերի» ՕԿՁ-ի մոտակայքում գտնվող ճյուղի՝ փակ լինելու պատճառով անհրաժեշտություն է առաջացել միջանկյալ միացում կառուցելու ջրատարի և ջրամբարի փրթող փականի միջև: Ինչպես նաև տեղադրվել է օդահեռ Արզնի-1-ի՝ «Աբովյան պուրակ» ՕԿՁ-ի ճյուղի վրա:



Արզնի 2

Ջրատարի դեպի «Փոքր Մհեր» հանգույցի վրա առաջացել էր վթար ≈ 15 լ/վ ջրաքանակի արտահոսքով: Վթարը վերացնելու համար անհրաժեշտություն առաջացավ կազմակերպելու ջրատարի կանգառ, որի ընթացքում կանխվել է նաև ջրատարի վրա գտնվող օդահեռ փականի մոտ գտնվող վթարը՝ 2լ/վ:

Չորաղբյուր-ԵրջէԿ

Ջրատարի վրա Երևանյան լճի մոտ առաջացել էր վթար ≈ 10 լ/վ, որն հաջորդ օրերին ավելի մեծացավ՝ դառնալով ≈ 50 լ/վ: Կազմակերպվել է ջրատարի կանգառ, որի ընթացքում վթարը վերացվել է: Վթարի կրկնվելու պատճառով որոշվել է կառուցել նոր ջրագիծ՝ ջրատարը տվյալ հատվածից շրջանցելու նպատակով:



Գառնի-Արտաշատ

Հերթական շրջայցերի ժամանակ հայտնաբերվել են վթարներ՝ գումարային 10լ/վ: Դրանք վերացվել են «Արտաշատ» ՇՏ-ի կողմից:

Գառնի-Նուբարաշեն-Խարբերդ

Շրջայցի ժամանակ ջրատարի վրա՝ միացման կետում, հայտնաբերվել է վթար՝ 1.5լ/վ:



3.5 ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Քաղաք Գյումրի

● Շիրակ տեղամասի կողմից ուսումնասիրություն է կատարվել Գյումրի քաղաքի Խնկոյան փողոցում՝ պարզելու նախկինում անջատված և խցափակված հին թուջե խողովակի մեջ ջրի առկայության պատճառը: Պարզվել է, որ տներից մեկի բնակիչը սխալ մոնտաժման արդյունքում հին ջրագծի մեջ նոր ջրագծից ջուր է սնուցում: Խնդիրը կարգավորվել է հին ջրագիծը ապամոնտաժելով: Շահագործումից հանվել է D=32մմ, L=7մ պողպատե ջրագիծ: Տնտեսվել է 1,2լ/վ ջրաքանակ:



● Հացառատ-Լճաշեն ջրատարի վրա կատարված ուսումնասիրությունների արդյունքում Չկալովկա գյուղի մոտ հայտնաբերվել է վթար, որը վերացնելուց հետո տնտեսվել է Q= 10լ/վ ջրաքանակ:



● Սևան ՕԿՋ լցվող ջրի քանակի նվազման հետևանքով կատարված ուսումնասիրությունների արդյունքում Լճաշենի պոմպակայանից դուրս եկող 150մմ պողպատե խողովակի վրա հայտնաբերվել է Q=5լ/վ քանակությամբ ջրակորուստ, որը վերացվել է տեղամասի կողմից:



● Սևան քաղաքի Սայաթ-Նովա փողոցում վթարադրոնողական աշխատանքների արդյունքում նույն փողոցի 2 շենքի միացումներից մեկի վրա հայտնաբերվել է վթար, որը խառնվում էր շենքի կոյուղուն: Տեղամասի կողմից այն անմիջապես վերացվել է: Արդյունքում տնտեսվել է 0,5լ/վ ջրաքանակ:



● Միկրոթաղամաս գոտու Խաղաղության փողոցի 160մմ պ/է խողովակի վրա տեղադրվել է գիշերային ծախսաչափ: Նույն գոտում իրականացված աշխատանքների արդյունքում Նալբանդյան և Շինարարներ փողոցների խաչմերուկում հայտնաբերվել է 0,2լ/վ քանակությամբ վթար:

Հետագա վթարների հայտնաբերման նպատակով Սևան ՕԿՁ-ի ելքի վրա տեղադրվել է ծախսաչափ:

Քաղաք Երևան

● Շենգավիթ տեղամասի և գոտիավորման վարչության համատեղ աշխատանքների արդյունքում Չեխով 46 և Մանանդյան 40 հասցեներում երկկողմանի խցափակվել է $D=800$ մմ տրամագծի խողովակաշարը, ինչպես նաև Մանանդյան փողոցի վերջնամասում խցափակվել է $d=150$ մմ տրամագծի խողովակ, որի արդյունքում շահագործումից հանվել է մոտ 350մ խողովակաշար և տնտեսվել է $Q = 6$ լ/վ ջրաքանակ:



● Նոր Նորքի 9-րդ գանգված՝ Վիլյուսի 87 շենքի դիմաց, գոտիավորման վարչության աշխատակիցների հետ հայտնաբերվել է գաղտնի վթար: Կատարվել է $D=150$ մմ խողովակի խցափակում և $L=30$ մ ջրագծի շահագործումից դուրս հանում:



● Դավթաշեն 2-րդ թաղամաս 3-րդ շենքի մոտ, $d=200$ մմ վթարային վիճակում գտնվող պողպատե խողովակի միջով $d=75$ մմ ՊԷ խողովակի ներարկման արդյունքում տնտեսվել է $Q = 3$ լ/վ ջրաքանակ:



● Արարատյան 10 (Բարաքներ) հասցեում հայտնաբերված մեծ հոսակորուստի արդյունքում Շենգավիթ տեղամասի ուժերով կառուցվել է նոր $D=90$ մմ տրամագծով և $L=110$ մ երկարությամբ ջրագիծ, որի արդյունքում շահագործումից հանվել է $D=800$ մմ տրամագծով ջրագիծը և տնտեսվել է $Q=12$ լ/վ ջրաքանակ, ինչպես նաև թվով 10 բաժանորդի ջրաչափեր դուրս են հանվել:



● Գոտիավորման վարչության և Արաբկիր ՇՏ-ի համատեղ ուսումնասիրությունների արդյունքում խցափակվել է $D=80$ մմ, $L=80$ մ վթարված ջրագիծ, ինչի արդյունքում տնտեսվել է $Q=10$ լ/վ ջրաքանակ



● Նոր Նորք Թևոսյան փողոց 8/2 հասցեի հարևանությամբ հայտնաբերվել է գաղտնի վթար: Կատարվել են 2 հատ $D=25$ մմ և $D=32$ մմ վթարված ջրագծերի անջատում և խցափակում միացման կետում: Արդյունքում տնտեսվել է $Q=7-8$ լ/վ ջրաքանակ:



● Գուրգեն Մահարի 129 հասցեի մոտ գոտիավորման վարչության աշխատակիցների հետ հայտնաբերվել է գաղտնի վթար $Q=5$ լ/վ ջրաքանակով, որը վերացվել է նոր 50 մ ջրագծի կառուցմամբ:




3.6 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● Ազատամուտ քլորակայանում Easiflo հիպոքլորիդի հաբի սարքավորման հում ջրի գծի վրա տեղադրվել է հետադարձ փական սարքի աշխատանքը կայունացնելու համար:

● Հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքը ապահովելու նպատակով՝ Ազատամուտ քլորակայանում իրականացվել է նաև Easiflo հիպոքլորիդի հաբի սարքավորման ջրի մակարդակի տվիչի փոխարինում:

● Չորադրյուր և Ծարավ Աղբյուր քլորակայաններում իրականացվել է հեղուկ քլորի պղնձե խողովակի փոխարինում՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար:



● Ավան Բարաջանյան 3/1 հասցեում հետագա շահագործման նպատակով իրականացվել է շարքից դուրս եկած 30լ/ժ արտադրողականությամբ GRUNDFOS դոզավորման պոմպի վերանորոգում:

● Հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը «Նովոտեյցովո» քլորակայանում խաթարվել է հեղուկ քլորի կոնտեյների ախտոտվածության պատճառով (սպասարկման ժամկետը լրացել է շուրջ երեք տարի առաջ): Խցափակվել է վակուում կարգավորիչը. իրականացվել է սարքի գնում, վերանորոգում և մաքրում, ինչի արդյունքում սարքը բերվել է աշխատանքային վիճակի:



● Գյուղ Թեղենիսի Արգակյան քլորակայանում իրականացվել է նոր L=300 գծմ պ/է 32մմ-ոց ջրագծի կառուցում: Նախկինում քլորացումը կատարվում էր ճնշումային պոմպի միջոցով, սակայն նոր ջրագիծը կառուցելուց հետո շահագործումից հանվել է 5.5 կվ հզորությամբ ճնշումային պոմպը:

● Գյուղ Թեղենիսի Արգակյան սան գոտում իրականացվել է 5.5Կվ-ոց պոմպի ապամոնտաժում, ապա տեղադրվել է նորը 1.5 Կվ-ոց պոմպ, ինչը թույլ կտա ֆորսմաժորային իրավիճակներում քլորացում կատարել նաև գեներատորի միջոցով:



● Կարբի գյուղի Շոր-Շոր պոմպակայանում իրականացվել է պոտորաչափի տեղադրում «Արտաշավան-Սաղմոսավան» ջրատարի վրա, որպեսզի հնարավոր լինի որոշել ջրատարի պոտորվածությունը:

● Վերոնշյալ «Արտաշավան-Սաղմոսավան» ջրատարի վրա իրականացվել է նաև 400մմ գծային և 250-մմ ջրթող փականների տեղադրում, որպեսզի ջրատարի պոտորվելու դեպքում հնարավոր լինի ավելի արագ և օպերատիվ դատարկել պոտորված ջրատարը:



3.7 1-85 ԹԵԺ ԳԻԾ

185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեգիր

● Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնի կողմից պատասխանվել է 34547 զանգի, որից առևտրային բնույթի զանգերը՝ 11672: Երևան քաղաքի համար եղել է 9063 զանգ:

● Փետրվար ամսվա Երևանի ցուցանիշը կազմել է 77,6%, իսկ մարզերի ցուցանիշը՝ 2609 զանգ (22,4%): Շահագործման վերաբերյալ ստացվել է 22875 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 16619 զանգ (72,7%), իսկ մարզերինը՝ 6256 զանգ (27,3%):

		Ստորագծանում	
Առևտրային	Շեղանեղ		10982
	ԵՐԵՎԱՆ		8655
	ՄԱՐԶԵՐ		2327
Շահագործում	ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ		21258
	ԱՐԵՎԵԼՔ		9528
	Շենգավիթ		3254
	Կենտրոն		1949
	Հրուսիս(Ալվան, Լոր, Լորթ)		1386
	Էրեբունի		940
	Պոմպ		499
	Սարգեր		1500
	այդ թվում Կոյուղու վթար		46
	այդ թվում Դիտանորի իջանում		3141
	ԱՐԵՎԱՌՏՔ		11730
	Արարիկիր		2950
	Քանաքեռ-Ջեյթուն		985
	Մաշտոց		2398
	Շահումյան		1666
	Պոմպ		679
Սարգեր		3052	
այդ թվում Կոյուղու վթար		85	
այդ թվում Դիտանորի իջանում		4367	
Շեղանեղ			32240

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Հրապարակումների քանակի առումով հաշվետու ամսին հիմնականը «Ձորաղբյուր/ԵրՀԿ – Շենգավիթ» խոշոր ջրատարի վթարի թեման է: Փետրվարի 9-ից մինչև 26-ն ապահովվել է 12 հրապարակում՝ լուսանկար, տեքստ, GIF, տեսանյութ, այդ թվում Արմենիա հեռուստատեսության անդրադարձը տվյալ վարչական շրջանի ջրամատակարարման խնդրին:



Դա պայմանավորված է ջրատարի իրար հաջորդած վթարներով, որի պատճառով ջրամատակարարման առումով տարածաշրջանում ստեղծվել էր բարդ իրավիճակ: Դժգոհության ալիքի դեմ առնելու համար անհրաժեշտ էր հանրությանը շարունակաբար տեղեկացնել ձեռնարկվող միջոցների մասին: Հանրային կապերի բաժնի /ՀԿԲ/ ակտիվ աշխատանքի շնորհիվ հաջողվեց խնդիրը լուծել:



Փետրվարին զգալի էր նաև պաշտոնական տեղեկատվության ծավալը: Հայաստան այցի շրջանակներում Վեոլիա Գրուպի Բալթիկ երկրների, Կովկասի և Կենտրոնական Ասիայի պատասխանատու տնօրեն Մալիկա Գենդուրին հանդիպեց ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանին՝ Վեոլիա Ջուր ՓԲԸ գործունեության հետ կապված հարցերով: Նրա հաջորդ հանդիպումը ՀՀ ՀՄԿՀ-ի նախագահ Գարեգին Բաղդասյանի հետ էր: Իր հերթին, Վեոլիա Ջուր ընկերության գլխավոր տնօրեն Մարիաննա Շահինյանը համագործակցության մասին համաձայնագիր կնքեց ՀՀ ՊԵԿ-ի նախագահ Էդվարդ Հովհաննիսյանի հետ՝ տրանսֆերային գնագոյացման ստուգումների համակարգը հանրապետությունում ներդնելու նպատակով պիլոտային ստուգում իրականացնելու մասին:

Ինչ վերաբերում է համակարգի գործունեությունը լուսաբանելուն, ապա այստեղ առաջին պլանում է եղել նոր տեխնիկայի ու տեխնոլոգիաների կիրառումը, ինչը բնական պետք է համարել, հաշվի առնելով Վեոլիա Ջուր ՓԲԸ ղեկավարության կողմից տվյալ ուղղությամբ տարվող աշխատանքների շարունակական ինտենսիվացումը:

Այսպես, 2 հրապարակում է եղել քլորակայաններում ներդրվող քլորի քանակի որոշման ավտոմատացված համակարգի վերաբերյալ, որի նպատակը խմելու ջրի որակի կառավարման մեխանիզմն ավելի օպտիմալ դարձնելն է և ստացվող տվյալները Կարգավարական բաժնի փոխանցելու հարցում մարդկային գործունեությունը բացառելը: Նույն ջրի որակի ապահովման թեմային է վերաբերվում Իջևանի և Դիլիջանի ջրի որակի լաբորատորիաների հազեցումը նոր սարքավորումներով, որին ՀԿԲ-ն անդրադարձել է 2 անգամ:


Հանրությանը ներկայացվել է նաև ակվաֆոնների կարևորությունն ու կիրառման տեխնոլոգիան, որպես գաղտնի վթարներ հայտնաբերելու ու այդ կերպ ջուր տնտեսելու հիմնական գործիքներից մեկը:

Հաջորդը բակային պոմպակայանների արդիականացման ծրագիրն է, որի շրջանակներում հին «փուչիկավոր» պոմպերը սկսել են մասսայաբար փոխարինվել ավելի «խելացի» ինվեստորային պոմպերով: Այս թեմայով առկա է 2 հրապարակում:

Վերջապես խոսքը Մեծ Բրիտանիայից ներկրված «շարժական լաբորատորիայի» մասին է՝ մինչև 120 մետր երկարությամբ խողովակների ներքին վիճակը ուսումնասիրելու նպատակով: Փետրվարին այն առաջին անգամ փորձարկվեց, որի արդյունքները հանրությանը ներկայացվեց Ֆեյսբուք սոցիալական ցանցում:

Ինչ վերաբերում է Օպերատորի ամենօրյա գործունեությանը, ապա այն լուսաբանելիս առաջին հերթին ուշադրություն է դարձվել ձմեռային ցուրտ եղանակային պայմաններում գործունեության դժվարություններին: Այսպես, ներկայացվել է Դիլիջանում և Աշոցքում իրականացված վթարի վերացման աշխատանքները:

ԶԼՄ-ների մշտադիտարկման արդյունքում ընկերության ֆեյսբուքյան էջում ՀԿԲ-ն կիսվել է 2 հրապարակմամբ՝ Դովեդ գյուղի ջրամատակարարման խնդրի լուծման հարցում Վեոլիայի ցուցաբերած օգնության և քլորակա-



յանները տվյալների ավտոմատ փոխանցման համակարգով հագեցնելու մասին: Բնականաբար, պարբերաբար ներկայացվել է նաև համակարգում առաջացող վթարների վերացումը, խնդիրների լուծումը, ջրանջատումների մասին տեղեկատվությունը, թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունները, ապօրինությունների հայտնաբերումը և այլն:

Այս բոլոր հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, [facebook.com/veolia.armenia](https://www.facebook.com/veolia.armenia)-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. [Veolia.am](https://www.veolia.am) պաշտոնական կայքում, twitter.com/Veolia_ARM և [youtube Veolia Jur](https://www.youtube.com/channel/UC...) էջերում:




*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*



5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

- Բաժնի կողմից մշակվել և Ընկերության 05/02/2021 թվականի Տնօրենների խորհրդի նիստին են զեկուցվել «Առողջություն և Անվտանգություն 2020 - միջոցառումների տարեկան ամփոփ հաշվետվության» հայերեն և անգլերեն տարբերակները:
- Բաժնի կողմից մշակվել, ձևավորվել և Ընկերության Գլխավոր տնօրենի 17/02/2021 թվականի N 12 Լ հրամանով գործողության մեջ է դրվել Վեոլիա Գրուպի «Ճգնաժամի կառավարման ընթացակարգի (նոր խմբագրությամբ)» հայերեն տարբերակը:
- Բաժնի կողմից մշակվել և Ընկերության ստորաբաժանումներին է տրամադրվել Վեոլիա կամպուսի «COVID-19՝ Իմ առողջության ռեֆլեքսները» ձեռնարկի հայերեն տարբերակը:
- Բաժնի կողմից մշակվել, ադապտացվել և Ընկերության ստորաբաժանումներին են տրամադրվել Վեոլիա Գրուպի «Զգոնություն 360 աստիճան» և «2 րոպե անվտանգ վարքագիծ» պոստերների հայերեն տարբերակները:
- ՈԱԱ Բաժինը, ղեկավարվելով «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքի հոդված 30-ի 2-րդ մասի ա) և բ) կետերի, ՀՀ ՏԿ և ԱԻ նախարարի 18-ը հունիսի 2015 թվականի N 595-Ն հրամանով հաստատված «Հրդեհային անվտանգության կանոնների» 5-րդ կետի 3) մասի պահանջներով մշակել և Ընկերության Ղեկավարության համաձայնեցման է ներկայացրել «Վեոլիա Ջուր Ընկերության 2021 թվականի հակահրդեհային միջոցառումների իրականացման պլանի» նախագիծը:



5.2. COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Ամենօրյա ռեժիմով Ընկերության ստորաբաժանումներից ՈԱԱ բաժնին ներկայացվել են կառուցվածքային ստորաբաժանումների անձնակազմերի ջերմաչափման և գրասենյակների ախտանման աշխատանքների վերաբերյալ տվյալները:
- Շարունակվել են Ընկերության ստորաբաժանումներին տրամադրվել համավարակի տարածման կանխարգելմանն ուղղված անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցներ:

5.3. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ

● Ընկերության «Հյուսիս» և «Հարավ» Շահագործման տնօրինությունների շահագործման տեղամասերի բաժնի պետերի և ինժեներական անձնակազմից թվով 69 աշխատողի համար Բաժինը կազմակերպեց և իրականացրեց «Մասնագիտական ոլորտի արդյունավետ կառավարման գործիքակազմ» դասընթացը: Դասընթացի ավարտին մասնակիցները լրացրեցին 16 հարցից բաղկացած հարցաթերթիկը:




● Բաժինը կազմակերպեց և իրականացրեց «ԱՊՄ-ների, անվտանգության այլ միջոցների դերը և նշանակությունը: Շինհրապարակների անվտանգ կազմակերպման պահանջները» դասընթացը, որին մասնակցեց 21 աշխատող Ընկերության «Հարավ» շահագործման տնօրինության տեղամասերի պետեր և ինժեներատեխնիկական անձնակազմ:



Պետք է նշել, որ վերոնշյալ դասընթացները կազմակերպվեցին COVID-19 համավարակի տարածման դեմ ուղղված սանիտարական կանոնների պահանջներին համապատասխան. դասընթացի մեկնարկից առաջ կատարվեց մասնակիցների հեռավար ջերմաչափում, գրանցում և COVID-19 տարածման կանխարգելման վերաբերյալ սանիտարական կանոնների իրազեկում: Դասընթացների ողջ ընթացքում մասնակիցների միջև պահպանվեց 1,5մ սոցիալական հեռավորություն, մասնակիցները և դասընթացավարը կրեցին դիմակներ:

2020-2021թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՄԸՆԹԱՅ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



5.4. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին Անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 35 վարչական շենքերում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Ծառայության կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, էքսկավատորի անվտանգ շահագործման ուղղությամբ:



ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

6.1. Համակարգչային ցանց

Փետրվար ամսվա ընթացքում IT բաժնի կողմից իրականաց հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև

- Մասնակցություն է ցուցաբերվել «Վեոլիա» Խմբի IT անվտանգության բաժնի կողմից կազմակերպված IT անվտանգության խորհրդի ժողովին: Քննարկվել են արդիական SS վտանգները և խմբի SS անվտանգության նախագծերը:

- Մասնակցություն է ցուցաբերվել «Վեոլիա» Խմբի IT անվտանգության բաժնի կողմից կազմակերպված Acunetix ծրագրային ապահովման ներկայացման և ուսուցման մի քանի ժողովներին:

- Մասնակցություն է ցուցաբերվել «Վեոլիա» Խմբի IT անվտանգության բաժնի կողմից կազմակերպված EDR ծրագրային ապահովման ներկայացման և ուսուցման մի քանի ժողովներին:

- Կազմակերպվել և անցկացվել է «Ինստիգեյթ Սոփայլ» ՓԲԸ-ի հետ ժողով՝ վերջիններիս նախաձեռնությամբ: Ժողովի ընթացքում քննարկվել է «Ինստիգեյթ Սոփայլ» ՓԲԸ-ի կողմից առաջարկվող նախագծի մեջ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի մասնակցության հետաքրքրությունները և հնարավորությունները: Առաջարկվող նախագիծն ենթադրում է էլեկտրամատակարարման դիմումների նախագծանախահաշվային փաստաթղթերի համաձայնեցման առցանց համակարգի ստեղծումը և ներդրումը հողային կամ օդային աշխատանքների ժամանակը, որն է ենթակառուցվածքի լարեր, մալուխներ կամ խողովակներ փաստվածքներից խուսափելու նպատակով: Ըստ ներկայացված տեղեկատվության այս համակարգի շահառու և մասնակից կողմերն են տեղական ինքնակառավարման մարմիններ, հանրային ծառայություններ իրականացնող ընկերություններ («Հայաստանի էլեկտրական ցանցեր»; ՓԲԸ, «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ) և դիմումատուներ (ՀՀ քաղաքացիներ, ՀՀ իրավաբանական անձինք):

- Կազմակերպվել և անցկացվել է հանդիպում «Doxx» կազմակերպության մասնագետների հետ, որի ընթացքում ներկայացվել է անլար Wi-Fi, ցանցային միացումների նոր տեխնոլոգիական լուծումները մեծ և միջին բիզնեսի համար: Այդ լուծումները հաշվի են առնում խոշոր կազմակերպությունների բոլոր հիմնական պահանջարկները՝ անվտանգություն, արտոնությունների կենտրոնացված կառավարում, մոնիտորինգի հնարավորություն, հասանելիության ճկուն սահմանափակումների հնարավորություն:

- IT բաժինը համալրվել է նոր աշխատակցով:

- Մեկնարկել է IT բաժնի աշխատակիցների շաբաթական հանդիպումների նախաձեռնությունը: Այդ հանդիպումների նպատակն է շաբաթական առնվազն մեկ անգամ IT բաժնի բոլոր աշխատակիցների միջև նորությունների և փորձի փոխանակումը, ընթացիկ և նոր նախագծերի ընդհանուր քննարկումը և առկա խնդիրների համար լուծումներ գտնելը՝ թիմի համընդհանուր ուժերով:

- Իրականացվել է IU-Connect հեռախոսային կենտրոն համակարգի ծրագրային տարբերակի թարմացում:

- Ազատ համակարգիչների և մոնիտորների ցանկից առանձնացվել և բաշխվել են սարքավորումների մի մասը: Փոխարինվել են չաշխատող մոնիտորները և հնամաշ համակարգիչները՝ կազմակերպության աշխատակիցների մոտ:

- Իրականացվել է Linux օպերացիոն համակարգով աշխատող սերվերների արդիական թարմացումների տեղադրումը:

- Իրականացվել է Windows օպերացիոն համակարգով աշխատող սերվերների արդիական թարմացումների տեղադրումը:

- Ինտերակտիվ համակարգի սերվերի դիսկային տարածքի օպտիմիզացիայի նպատակով՝ բոլոր լուսանկարները մինչև 2020թ. տեղափոխվել են արխիվային սերվեր:

- Ստեղծվել են նոր օգտանումներ veolia.com G Suite համակարգում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի աշխատակիցների համար:

- Ստեղծվել է EDR համակարգի ադմինիստրատիվ պանելի մուտքի, ինտերնետից հասանելիությունը ֆիլտրացնող, համակարգ:

- «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի IT բաժնի աշխատակիցների համար տրամադրվել է Acunetix համակարգի մուտքի արտոնությունները և մեկնարկել է այդ համակարգով ինտերնետից հասանելի ռեսուրսների սկանավորումը և սկանավորման արդյունքում բացահայտած ռիսկերի մասին հաշվետվությունների տրամադրումը:

- Մեկ տարով երկարաձգվել է vjur.am դոմեյնը:

- Իրականացվել է Ֆուչիկ 1/3 հասցեում գտնվող տեսահսկման համակարգի վերանորոգումը:

- Թարմացվել է նույնականացման քարտ կարդալու ծրագրային ապահովման արտոնագրերը:

- Մեկնարկել է աշխատակիցների տաբելային համարներով «Active Directory»- ում իդենտիֆիկացման նախագիծը:

- Իրականացվել է հարցադրում «Լոկատոր» ընկերությանը RTU սարքերի, Data Logger-ների և սերվերների ինտերնետից հասանելի IP հասցեների և օգտագործվող ցանցային պորտերի ցանկի տրամադրման համար: Ցանկը տրամադրվել է «Լոկատոր» ընկերության կողմից և մեկնարկել է այդ ցանկի հիման վրա վերլուծությունը:

- Կազմակերպվել և իրականացվել է Քարտեզագրման բաժնի երկու պլոտներների վերանորոգումը:

- Մեկնարկել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ում գործող բոլոր համակարգիչների և դյուրակիր համակարգիչների վրա Proxy Server կարգավորումների ավտոմատ կարգավորումների իրականացման նախագիծը:

● Մեկնարկել է «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի ֆայլային սերվերների աուդիտի նախագիծը, որի արդյունքում հնարավոր կդառնա ֆայլային սերվերների ազատումը հին և այլևս չօգտագործվող տվյալներից և հետագա տվյալների գույքագրումը:

● «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի ԲՄԳ բաժնի աշխատակիցների համար բացվել և կարգավորվել են անվանական էլ. նամակագրության հասցեներ, որոնք փոխարինելու են համընդհանուր օգտագործվող ԲՄԳ բաժնի էլ. հասցեն:

● Փետրվարի 13-ին տեղի ունեցաց ուժգին երկրաշարժից հետո իրականացվել է բոլոր սերվերների և հիմնական ցանցյին սարքավորումների ստուգում երկրաշարժի հետևանքով հնարավոր խափանումների բացահայտման նպատակով: Խաբանում չի բացահայտվել:

● Իրականացվել է SCADA համակարգի սերվերների հասանելիությունն ապահովող սերվերի տեղափոխում հնամաշ սերվերից վիրտուալ սերվերների տիրույթ:

aa Ներկայացվել է Google Suite ծրագրային համալիրի նոր հնարավորությունը PDF կամ JPG ֆայլերից տեքստի արտահանման համար:

● Իրականացվել է “Birdz” կազմակերպության կողմից պիլոտային ծրագրի շրջանակներում գնված և բաժանորդների մոտ տեղադրված հեռահար տվյալների փոխանցման հնարավորությամբ ջրաչափերից տվյալների հավաքագրումը և այդ տվյալների արտահանման և հետագա մշակման փորձարկումը: Փորձարկման արդյունքներում հայտնաբերվել է այդ տվյալների արտահանման և մշակման հետ կապված խնդիրներ: Հարցում է իրականացվել “Birdz” կազմակերպության մասնագետներին հնարավոր լուծումների տրամադրման համար:

- Ստեղծվել է «Վեռլիա Ջուր» ՓԲԸ առկա բոլոր տեսակի մամուլային համակարգերի մանրամասն ցանկ:
- Սպասարկվել է մոտավորապես 300 զանգ IT բաժնի աջակցության համարով:
- Գրանցվել և փակվել է մոտ 270 աջակցության տոմս:

6.2. Ինտերակտիվ համակարգ

Փետրվար ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

● Բանկային վճարային համակարգերի ուսուսնասիրություն է կատարվել, մշակվել է մեխանիզմ առցանց վճարումներ ընդունելու վերաբերյալ:

● Իդրամ ընկերության հետ տարվում են բանակցություններ Իդրամ վճարային համակարգն ինտերակտիվ համակարգ ներդնելու նպատակով:

● Ջրաչափերի փոխարինման միասնական հարթակ ծրագրային ապահովման մեջ մի շարք թարմացումներ և փոփոխություններ են իրականացվել Առևտրային տնօրինության ռեսուրսները ներգրավելու ուղղությամբ:

● Կատարվել են մի շարք ծրագրային թարմացումներ ինտերակտիվ համակարգում:

● Ինտերակտիվ համակարգում ներդրվել է բջջային համարների նոր համակարգ, որի միջոցով հնարավորություն է ընձեռնվել բոլոր հեռախոսահամարների իդենտիֆիկացումն ապահովելու համար:

● Ակտեր Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է փետրվար ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Խախտման արձանագրություն			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. խ/մ	մն. դրամ
Հյուսիս	2	4.5	0.7
Էրեբունի	7	5.7	1.0
Շենգավիթ	1	0.1	0.0
Կենտրոն	6	2.9	0.5
Արաբկիր	9	2.5	0.4
Մաշտոց	2	0.8	0.1
Շահումյան	7	8.7	1.5
ԱՎԲ	63	39.1	6.7
Լոռի	2	0.6	0.1
Շիրակ	13	3.1	0.5
Արթիկ	2	0.8	0.1
Արարատ	8	0.7	0.1
Արմվյան	13	19.6	3.1
Հրազդան	11	2.5	0.4
Արտաշատ	10	1.5	0.2
Բերդ	1	0.3	0.0
Գավառ	7	3.6	0.6
Էջմիածին	3	5.7	1.0
Թային	1	11.4	0.4
Իջևան	10	0.9	0.2
Մարտունի	1	0.2	0.0
Աշտարակ	4	0.5	0.1
Մայիտակ	1	0.1	0.0
Ընդամենը	184	115.5	17.9

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ)
 Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է փետրվար ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Լաբորատորիա				
Տեղանամ	Միջանոթություն		Մնասորթություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Հյուսիս	5	1.21	28	0.18
Էրեբունի	5	1.73	38	0.21
Ծենդավիթ		-	3	0.01
Կենտրոն	15	6.59	61	0.39
Սրաքկիր	5	2.12	40	0.38
Մաշտոց	17	6.13	53	0.55
Ծահուսյան	19	4.69	81	1.02
Քանաքեռ-Զեյթուն	7	4.16	28	0.15
Լոռի	17	25.95	57	0.30
Ծիրակ	26	6.34	97	0.76
Սրթիկ	9	3.31	12	0.05
Սրարատ	2	0.29	7	0.04
Սքովյան	14	4.35	161	1.56
Հրազդան	5	0.68	18	0.05
Սլավերդի	6	4.31	36	0.27
Սշոցք	1	0.24	5	0.03
Սպարան	1	0.17	31	0.35
Սրտաշատ	2	1.55	26	0.31
Գավառ	5	1.73	34	0.33
Գորիս	5	2.06	6	0.04
Դիլիջան		-	6	0.08
Եղեգնաձոր	4	1.80	15	0.16
Էջմիածին	2	0.37	6	0.04
Թալին		-	3	0.03
Իջևան	3	0.11	16	0.08
Կապան	8	2.84	31	0.14
Ճամբարակ		-	1	0.00
Մասիս	4	1.87	18	0.09
Մարտունի	1	0.26	45	0.63
Մեղրի	1	0.52		-
Նոյեմբերյան	1	0.26	2	0.00
Սրմավիր	6	4.51	56	0.74
Սևան		-	3	0.01
Վայք		-	9	0.05
Սշտարակ		-	7	0.02
Չարենցավան	8	2.06	30	0.07
Սիսիան	1	1.22	14	0.12
Սպիտակ		-	9	0.04
Ստեփանավան	2	1.74		-
Ընդամենը	207	95.15	1093	9.27



«ՎԵՈՒԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Արովյան 66ա
E-mail: info@vjur.am